լըւեալ ամուսնոյն, դիմեալ գայրացմամբ առ հայրն իւր թէ Փեսայ քո գայս հայհոյութիւնս ունի և բազում խրատիւ ոչ կարացի մոռացուցանել գխօսս նորա: Եւ յայնմ ժամու եւ նա ի վեր վազեալ, որպէս թէ ի դիւէ հարեալ, երթայ և ասէ գատոյ քաղաքին որ էր (պաբաք). եւ նա արս ոմանս առաքեալ և ըմբռնեալ գնա տարան առ նոսա. եւ նոքա խրատիւ եւ սպառնալեօք ոչ կարացին խախտել, զի նա ասէր թէ Հաւատ Քրիստոսի է հաւատս: Եւ տեսին զի ոչ կարացին յաղթել, համբաւեցին՝ թէ ցնդեալ է, և եդին ի բանտի. եւ արս ոմանս առաքեցին ի քաղաքս Ըստամպօլ՝ ի վէգիրն, որ էր Տէվրիշ Մէհմէտ փաշան, թէ այսպիսի բան կայ, թողցո՞ւք գնա թէ սպանցուք կամ այդր առաքեսցուք զի դուք առնիջիք զդատաստան դորա: Եւ վէգիրն տայ հրաման թէ Այդր զդա կորուսջիք. և նոքա հանեալ գնա ի բանտէն և ասեն թէ Ահա՛ հրաման եկն՝ թէ սպանցի. և՛ և հայհոյեա՛ զհաւատս քրիստոնէից եւ ասա՛ թէ ցնդեալ էի և ոչ գիտէի գխելքս առ իս: Եւ ոչ այնու կարացին խախտել, այլ վճիռ հատեալ ի վերայ նորա թէ կախեսցի Գ օր ի տեսիլ ոամկաց ամենայն քաղաքիս, եւ տան գնա ի կախել: Եւ ի ճանապարհին աղաղակէր եւ ասէր թէ Հաւատ Քրիստոսի է եւ հաւատն քրիստոնէից ստոյգ[1]) եւ ճշմարիտ, մինչեւ ի տեղի կախաղանին որ ասի (պաբաք), եւ անդ գնա ի վեր քարշեալ կախեցին եւ կատարեցաւ ի Քրիստոս: Եւ առաջի պահու գիշերոյն, որ արք բնակչացն ի քաղաքին դեռ ի հացի լեալ և այլք արթուն, յանկարծակի լոյս սաստիկ պայծառ որպէս զարփին իջեալ ի վերայ նորա, որ եւ ճառագայթ լուսոյն ընդ քաղաքին եւ ի մէջ տանեացն եւ լուսամտիցն տարածեցաւ որպէս զարե-

1) ստուգ.